

ՅԱՐՈՒՄՆԵՐ ԵԳԻՊՏԱՂԱՅ ԱԶԳ. ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Ասիկ առաջ հրատարակած էինք Գահիրէին քէ Աղեփանդրիայէն Եգիպտահայ Ազգ. Խորհուրդին յարած կազմակերպութեանց եւ միութեանց յարումի նամակները: Այսօր լուս կ'ընծայենք Գահիրէի Հայ Գեղարուեստասիրաց Միութեան, Հայկ. Ընթերցասրահին եւ Վասպուրականի Հայրենակց. Միութեան յարումի նամակները, որոնց պատճենները դրկուած են մեզի Եգիպտահայ Ազգ. Խորհուրդի կեդր. Վարչութեան կողմէ, առ ի հրատարակութիւն:

Հայ Գեղարուեստասիրաց Միութեան յարումը

Պատ. Վարչութիւն Եգիպտահայ Ազգ. Խորհուրդի

Ազնիւ Տեարք, Աստ

Հաճոյքով տեղեկացանք կազմութեանը Եգիպտահայ Ազգային Խորհուրդիդ և իր ունենալիք ազգօգուտ գործունէութեանց մէկ ընդհանուր պատկերին, զորս կը ներկայացնէիք «Արե»ի Հոկտեմբեր 13ի Զեր կոչին մէջ:

Զերմագինս շնորհաւորելէ ետք Զեր այս առած ազգային տեսակէտով մեծ կարեւորութիւն ունեցող քայլը, ի պատասխան մեզ ուղարկուած հրաւերին, Հայ Գեղարուեստասիրաց Միութիւնը ներկայիւս կը յայտնէ իր անվերապահ յարումը նորակազմ Խորհուրդիդ:

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով, հաճելէք ընդունիլ, Ազն. Տեարք՝ մեր յարգալիր բարեկները:

Ի դիմաց Հայ Գեղ. Միութեան Վարչութեան
Ստորագրութիւնք
(Կնիք)

Հայկական Ընթերցասրահի յարումը

Եգիպտահայ Ազգ. Խորհուրդի կեդր. Վարչութեան

Աստ

Մեծայարգ Տեարք,

Հայկական Ընթերցասրահի Վարչութիւնը՝ ընդառաջելով Զեր 11 Հոկտ. 1945 թուակիր կոչ-յայտարարագրին, ներկայիւս կը յայտնէ թէ անվերապահօրէն կ'ընդունի իր ամբողջութեանը մէջ, անոր մէջ յայտնուած սկզբունքներն ու ուղեգիծը և կը փոփոխի իր մասնակցութիւնը բերել Զեր ամսեկիք հայրենանպատ աշխատանքներուն:

Կը խնդրենք այս առթիւ ընդունիլ Վարչութեանս յարգանքները:

Ի դիմաց Հայկ. Ընթերց. Վարչութեան
Ստորագրութիւնք
(Կնիք)

Վասպուրական Միութեան Գահիրէի Մասնաճիւղին յարումը

Մեծայարգ Տեար Ատենաւեա և Յարգելի անդամք

Եգիպտահայ Ազգային Խորհուրդի

Ազնիւ Տեարք,

Վարչութիւնս հաճոյքով ստացած է Զեր Հոկտ. 22 թուակիրը. որով կը հրաւիրէք Միութիւնս իր մասնակցութիւնը բերելու Զեր սկսած հայրենասիրական գործին:

Միութիւնս իրեն համար նուիրական պարտականութիւն կը համարէ մասնակցիլ Զեր աշխատանքին:

Յաջողութեան մաղթանքներով և յարգանք
Ի դիմաց Վարչութեան
Ստորագրութիւնք
(Կնիք)